**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

30 մարտի 2018 թվականի N 47-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Արմինե Պետրոսյանին Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի թիվ 7 հասցեում գործող մանրածախ առևտրի խանութում 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի մանրածախ վաճառք.

2) ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մարտի 30
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 48-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սիմոն Հայրապետյանին Գետամեջ համայնքի 2-րդ փողոցի N 14 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտում 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի իրացում.

2) ծխախոտի արտադրանքի իրացում,

3) հանրային սննդի կազմակերպում և իրացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մարտի 30
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2018 թվականի N 49-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Մանուկի Մուրադյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /հիմք՝ որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծ, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0010-0018/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 5-րդ փողոց 2-րդ փակուղի տուն N 3:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մարտի 30
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2018 թվականի N 50-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» ենթակետով և 22.1 կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Հայկ Մանուկի Մուրադյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 5-րդ փողոցի 2-րդ փակուղու 3-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0010-0018)՝

1) 1950 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 146,31 քառակուսի մետր, 1952 թվականին ինքնակամ կառուցած թոնրատունը՝ 17,68 քառակուսի մետր, 1992 թվականին ինքնակամ կառուցած աստիճանավանդակները՝ 4,09 քառակուսի մետր արտաքին մակերեսներով,

2) 2014 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 14,64 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված 14,64 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին վճարել 19 040 (տասնինը հազար քառասուն) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի ապրիլի 3
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ապրիլի 2018 թվականի N 51-Ա

### ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Գետամեջ (Պտղնի 1) հասցեում գտնվող Ազնիվ Միքայելի Քեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2435858, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0232-0005/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 16-րդ փողոց N 17:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի ապրիլի 5
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2018 թվականի N 52-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի ապրիլի 3-ի N 01/12.2/1453-18 գրության՝ ***որոշում եմ.***

1. «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակում 2018 թվականի ապրիլի 14-ին համայնքի տարածքում կազմակերպել և անցկացնել համայնքային շաբաթօրյակ, իրականացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման միջոցառումներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի ապրիլի 5
գ.Գետամեջ